

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисть, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1900 ԹԱՎԱՆԻ

ՄՇԱԿ

(28-ՐԴ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿՈՆ ԵՒ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԷ. «Մ շ ա կ ի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն
ամսականը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ
ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի
ամսականը՝ 1 ռուբլի:

ՄՇԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե ռ ի կ ա յ ի բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 6 ռուբլի. Եւ ը ո ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա ռ ս կ ա ս տ ա ն ի
բաժանորդները 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻ» գրվել կարելի է ԽՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ (Բազմաթիւ եւ Բարձրակարգ փողոցների
անկիւն):

Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻ» գրվելու համար, եւ առհասարակ նամակ-
ներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция
«МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն 2 Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ եղաք.—ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մա-
նու. Երկրաշարժից վնասվածների օգտին. Նամակ
Թէոդորայից. Նամակ խմբագրութեան. Նա-
մակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱԿՎՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Երկրաշարժի տեղում:

ԻՆՉ ԵՂԱՔ

Մեր ընթերցողներին յայտնի է, որ
Բազմաթիւ ժողոված է Արաբաշարժի դա-
ւառի երկրաշարժից վնասվածների օգտին
մի որոշ գումար: Առաջ ասում էին, թէ
այդ գումարը 10,000 ռուբլի է, յետոյ
հաղորդեցին, թէ նա հասել է 20,000
նոյն-իսկ 30,000 ռուբլու: Սակայն մինչեւ
այժմ տեղեկութիւն չը կայ, թէ ի՞նչ ե-
ղաւ այդ գումարը, ո՞ւմ ձեռքին է նա
գտնվում, ի՞նչ գործադրութիւն պէտք է
ստանայ, ինչո՞ւ չէ ուղարկվում նպաստա-
մատոյց մասնաժողովին եւ ի՞նչ վերջապէս
նա պէտք է որոշ ընթացքի մէջ ընկնի:

Բազմաթիւների մի խմբի մէջ ցանկութիւն
կար՝ ժողովված այդ գումարին որոշ գոր-
ծադրութիւն տալ, օրինակ՝ յատկացնել
նրան որբեր խնամելու, գիւղատնտեսական
բարեօրոշման միջոցներ, ընտիր տեսակի
սերմացու եւ կենդանիներ գնելու, կամ

ուրիշ այդ տեսակ նպատակների իրագոր-
ծութեան: Սակայն օրերը արագ անցնում
են, պահանջները լաւ-վատ հոգացվում
են, իսկ Բազմաթիւ անկերջ ծրագիրները մը-
նում են ֆրագներ եւ ոչ մի դեր չեն կա-
տարում վնասվածների բազմաթիւ կարիք-
ներին բաւարարութիւն տալու գործում:

Նոյն Բազմաթիւ նուիրատուների մի ուրիշ
մեծ խումբ, որ խմբագրութիւնների մի-
ջոցով կամ անմիջական դիմումներ անելով
հասցրեց իր նուէրները գլխաւոր նպաս-
տամատոյց մասնաժողովի ձեռքը, միացած
բազմաթիւ ուրիշ քաղաքների եւ գիւղե-
րի նուիրատուների հետ՝ կարող են աւելի
հանգիստ զգալ իրանց, որովհետեւ նրանք
մի որոշ չափով բաժին ունեն նպաստի
գործողութեան մէջ: Այդ նուիրատուները
գիտեն, որ իրանց ընթացքները եւ կոպէկ-
ները այժմ մասնակցում են օգնութեան
այն մեծ գործի մէջ, որ կազմակերպված
է երկրաշարժից վնասվածների համար:
Այդ նուէրների համագումարին են վեր-
ցնվում այն ծախքի գումարները, որոնք
գործադրվում են բժշկական օգնութեան,
սերմացու ու սնային կենդանիներ գնելու
եւ ուրիշ կարիքների վրա:

Ձեզ ենք գիտում, Բազմաթիւ նուէր հան-
գանակողներ. ձեր վրա պարտականութիւն
կայ շուտով որոշ գործադրութիւն տալ
ձեզ մօտ եղած գումարին: Զբաղվեցէ՛ք

ձեր ծրագիրները մշակման հարցով, որ-
քան կարելի է շուտ, եւ դրէք ձեր վերջ-
նական վճիռը: Իսկ եթէ դուք ժամանակ
չունէք այդ գործով զբաղվելու, կամ ձեզ
համար հեռուից դժուար է որոշ ծրագիր
առաջարկելը, այն ժամանակ ուղարկեցէ՛ք
ձեր մօտ եղած գումարը գլխաւոր նպաս-
տամատոյց մասնաժողովին, յայտնելով ձեր
ընդհանուր փափաքները նրանց գործա-
դրութեան մասին, իսկ մնացածը թողէք
մասնաժողովին:

Շատ ծանր տպաւորութիւն է թողնում
Բազմաթիւ նուէր հանգանակողների զանազա-
կոտութիւնը այս գործում, որտեղ ան-
հրաժեշտ էր դիւրագոյացութեան եւ ան-
միջական կարեկցութեան արտայայտու-
թիւն:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Հայոց բազմաթիւ, նոյն-իսկ անթիւ բա-
նաստեղծների համար մի շատ հետաքրքրա-
կան հարց.—ինչի՞ց է, որ նրանց գրուածքները,
թէեւ կրում են «բանաստեղծութիւն» անունը,
թէեւ ունեն ստանաւորների ձեւ, չեն հետա-
քրքրում ընթերցողներին, չեն կարգացվում եւ
առհասարակ կատարեալ անտարբերութեան են
հանդիպում: Մեր պոետախօսներին միեթա-
րելու համար կարելի է ասել, որ այդ երեւոյ-
թը նկատվում է եւ ուրիշ գրականութիւնների
մէջ: Բայց ինչի՞ց է պայման, արդեօք ընթեր-
ցող հասարակութիւնն է փոխվել թէ բանա-
ստեղծութիւնը: Այդ հարցին պատասխանում է
մի եպիսկոպոս լեհական «POLSKA» լրագրի մէջ:

Ինչ էլ լինի—ասում է նա—անձնական
զգացմունքները եւ ընտելեան նկարագրու-
թիւնները համեմատաբար լաւ կտորներ են
կազմում ժամանակակից բանաստեղծութեան
մէջ եւ այստեղ ոչինչ օտարոտի բան չը կայ:
Երբ իդէալի արեգակը խաւարել է եւ այլ
եւս հեռաւոր հորիզոններ չէ լուսաւորում,
մի փոքրիկ կրակն էլ բաւական է, որ նըշ-
մարվի այն ինչ գտնվում է մարդու մօտ,
մինչեւ որ կեղտոտ կրքերը այդ կրակն էլ
չեն հանգցնի: Այս բոլորը նկատի առնելով,
մենք կը հասկանանք, թէ ինչու բանա-
ստեղծները գտնաւորվել են եւ գտնաւոր-
վում են, որ մեր հասարակութիւնը բաւա-
կանաչափ սէր չունի դէպի բանաստեղծու-
թիւնը: Հասարակութիւնը հող չէ անում եւ
ուշագործութիւն չէ դարձնում բանաստեղծ-
ների գրուածքները վրա, որովհետեւ բա-
նաստեղծները այն ճանապարհով չեն գնում,
որով գնում է հասարակութիւնը: Նրանք
չափաւորում են հասարակութեան օրնո՞ւ-
նօթ, խորթ, երբեմն նոյն-իսկ անախտի եւ
ատելի բաների մասին, եւ ոչ մի հիմք չը
կար հիմնաւոր դրանցով միայն այն պատ-

ճառով, որ այդ ամենը արտայայտվում է
հնչուն ոտանաւորների մէջ: Երկրորդ պատ-
ճառը իմ կարծիքով այն է, որ բանաստեղ-
ծը երգում է դատարկ բաներ, կամ իր
անձը, որ նոյնպէս հետաքրքրական չէ հա-
սարակութեան համար:

Բաւական ճիշտ նկատված մի գրութիւն:
Մանրացած հոգիներ, որոնք չեն կարողանում
լայն ու խոր կերպով ըմբռնել մարդկութիւնը,
որոնք իրանց քիթը խրում են իրանց մէջ եւ
զգացմունքի մի կտոր, մի ծաղիկ, մի տերեւ
նկարագրելու մէջ են գտնում իրանց փոքրիկ
ողեւորութիւնը—անա ժամանակակից բանաս-
տեղծի պաշարը, այն էլ այն բանաստեղծի, որ
չնորհք ունի, «երկնային կայծ» է ստացել: Մե-
զանում նոյն-իսկ «կայծ» էլ չէ պահանջվում.
բաւական է միայն Գալիլայի «Յանգարա-
նը» եւ այդ գանձի երջանիկ տէրը Պառնասի
գագաթին է հանվում մեր անշնորհք, բէկլամա-
մու խմբագիրների ձեռքով: Իրաւունք չունի
հասարակութիւնը միանգամայն անտես անել
այդ—եթէ կարելի ասել—«երգիչներին»: Ինա-
կան երեւոյթ է, որ անշնորհք սպասաւորները
միայն արջի ծառայութիւն կարող են մատու-
ցանել այն հասկացողութեան, որին որպէս թէ
երկրպագում են: Մեզանում առհասարակ ըն-
կնում, ցեխոտվում են շատ մտաւոր գործեր,
գեղարուեստը՝ զանազան փերեզակների լրբու-
թեան յանձնված, թատրոնը՝ բաղադրանքին տե-
սարաններով արատաւորված: Կար մի տեղ,
ուր պայծառ էին Պէշկիւնայի տնային, Գամառ-
Քաթիկայաների, Դուրեաների, Շահ-Աղիզների
անունները. այդ տեղն էլ ապականեցին բա-
նաստեղծութեան մասին բարբարոսական հաս-
կացողութիւն ունեցող զաւճաճներ, որոնք օն-
ինայ քրքրում, գրգռում են ընթերցողի զղե-
րը իրանց վշտերով, էքսոթիկան կրքերով եւ
բուժ միակողմանիութեամբ: Բացառութիւննե-
րը, ի հարկէ, միշտ կան. բայց վանդալական
այն հեղեղումը, որ մտել է մեր գրականու-
թեան մէջ, այդ բացառութիւններն էլ իսկ-
զում եւ վերջ ի վերջոյ ընթերցողը, ըստ երե-
ւոյթի, պիտի սոսկայ, տեսնելով բանաստեղ-
ծութիւնների ամեն մի նոր հատոր, որ դուրս է
գալիս մամուլի տակից՝ մեր գրական գծախոտ
աղբատութիւնը աւելի եւս անտանելի դար-
ձնելու համար: Այսպէս շարունակելով մենք
չենք հասնի մի ժամանակի, երբ բանաստեղծ
եւ բանաստեղծութիւն բաւերը այնքան արա-
տաւորված կը լինեն, որ ոչ ոք չի ուղեւայ ու-
շագործիւն դարձնել նոյն-իսկ չնորհք ու տա-
ղանդ ունեցող բանաստեղծների վրա: Ապա-
կանվում է հասկացողութիւնը, ապականվում
է Պառնասը: Հետեւանք...

Խօսքը բանաստեղծների մասին է, եւ մենք
չենք կարող չը յիշատակել մեր մի բանաստեղ-
ծին, որ անձնական զգացմունքների երգիչ էր,

ԲԱՆԱՍՈՒԹԵՐՈՐԴԱԿԱՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՏԵՂՈՒՄ

(Նամակ Բարալէից գրվել)

IV

Գիշեր է, պարզ ու անամպ գիշեր: Կապու-
տակ երկնքի աստղերը խլիլան չընայ
աչքերի պէս վառվառում են. նրանց վրա չէ
ազդում Մերենիայի աղէկաւոր հեծկտանքը.
աւերակների սեւ-սեւ ստուերները հեռու, շատ
հեռու են նրանցից: Գիւղի ավին, խեղաքարի
գիւղին քրքիլի պէս, հռչում է կրակի ալ
բողը, որի կառ-կարմիր շողը լուսաւորում է
խոտերի ահազին դէգերը: Բորբոքված խա-
բոյի շուրջը ձեռքերը ծոցերին կանգնած են
քանի չափ գիւղացի երիտասարդներ, որոնց
վիճակիկ էր սեփական ասան փրատակների
գծախոտ գիշերապահի պաշտօնը վարել վառ-
ված է խարոյկը, բայց մարել են մերենեցի
երիտասարդները: Ո՛ւր է նրանց գիւղ զլէշները՝
ու «մէանիներ» անուշ գլղոցը, որ լուսնեակ
գիշերներին սար ձոր էր դրդապնում ու քա-

նի-քանի անմղ գեղջկուհիների գիշերվայ
քաղցը բուռն կտրում:

Մօտեցայ խարոյկին: Դժբախտ գիշերապահ-
ները պարտաստվում էին ընթերցու: Բայց ինչ
ընթերցի... Փոված կապերտի վրա շարած էին
8—9 հատ տեղական կլոր քարի հացեր, որ
հաղիւ թէ 4—5 ֆունտ քար. կապերտի ան-
շուք սփռոցը չընկալած էին 15—18 գծոյն
երիտասարդներ, որ ամբողջ օրը ստացակոյտե-
րի հետ կուլուրուց յետոյ, այժմ քաղցած ստա-
նոքները յաղեցնելու մի կտոր չոր ու ցամաք
հաց էլ չունէին: Ինձ տեսնելու պէս գրեթէ
բոլորն էլ ոտի կանգնեցին ու սիրով ընդու-
նեցին բարեւ:

—Նստէ՛ք, տղաք, նստէ՛ք հացերը կերէ՛ք:
Բայց տղաքը լուռ էին, ինչ-որ տատանման
մէջ կանգնած էին. վերջապէս հասակաւորնե-
րից մինը համարձակվեց ասել.

—Հրամայե՛ք, վարժապետ ջան, բրթում մը
եւ դու առ. ի՞նչ էնեք, քեզի լայնը բան չու-
նիք ճըմը, դուք ա գիտէ՛ք մեր հալը. Ասված
էսման էր կամեցել, փառք իրեն:

—Նստէ՛ք, նստէ՛ք, ես չնորհակալ եմ. Աս-
տուած ողորմած է, ամեն ինչ էլի կարգի կըն-
կնի, հանգստացրի ես:

—Տղաք, Ռաֆն ո՛ւր է:

—Չը կայ ծօ, ինչ եղաւ. չըմէ էլի Տալօին
քովը գնաց: Տղաք, էտ խեղճը վերջը խեղճ
թոցնէ կը:

Յիշատի Ռաֆն Տալօին «քովն» էր: Խարոյկից
մի փոքր հեռու, խոտերի արանքում, շարված
էին միմեանց մօտ 8—9 հատ կանանց դիակ-
ներ, որ հենց այդ օրը հանած էին փրատակ-
ների տակից: Նրանց վրա չը կար գիւղական
հասած աղջկայ սովորական արդուգործը. չէր
ուս փրակիլը նետած մի մի կողմ, քիբրը
պատառոտած, մազերը զգգված, կարկտահար
նորահաս հասկերի էին նման: Սարսափելի էր
նրանց սպիտակ ձակաւորների վրա դրոշմված
մանկան տաքնապի սեւ կնիքը: Խոշոր աչքերը
չուած, մարմարի պէս սպիտակ ատամները բո-
լոր ուժով սեղմած, կարծես վերջին ճիգն էին
թափում անգութ ձակաւորի դէմ կուլուրու:
Ոմանք էլ աղերսապին հայեացքները յառած
դէպ երկնք, կարծես գթութիւն էին հայցում
ու ձեռքերը տարածած մէկին օգնութեան
կանչում: Դիակների մօտ, սպիտակ ձիւնի վրա,
անհոգ կոշտած էր մի թխաղէմ երիտասարդ,
որ ապուշի պէս կարծես անթարթ հայեացքը
յառած մէկի աչերին՝ ուզում էր նրանց մէջ

կարգալ իր բախտի վերջին խօսքը: Բայց նրա
հայեացքին չը կար պատասխանող մէկը, որի
փառվառն աչերը վաղուց մարել էին ու հմայ-
իչ հայեացքը առոյն քօրով թողարկվել: Հին
ծանօթի պէս ստացեց ու թեւից բռնելով
սթափեցրի դառն ու խաբուսիկ երազները:

—Ռաֆ, երեւոյթ խօ՛ չես, ախր ի՞նչ ես ա-
նում:

Հուժկու երիտասարդը քաշվելով անձանո-
թիս ներկայութիւնից՝ ինքն իրան հաւաքեց,
մէկ գիւղականին նայեց ու արցունքոտ աչքեր
ինձ դարձնելով, կուսակված ամպի պէս փրաւ.

—Ա՛խ, աղս ջան, կըսես. արդեօք կեանքիդ
մէջ էսման ցաւը՝ տեսել ես... Ասված գիւշ-
միս չը ցցնէ... Ա՛խ, ի՞նչ կըլլի, Տալօ ջան,
էդ անուշ լիզուրը լիզվի՞ր դիպած չըլլի, ես
իմա քուկիդ հետ կապվի՞ր պրծէի...
Ռաֆի ընկերները ուժով հեռացրին նրան
անչափացած Տալօի մօտից, որի աղերսապին
մարած հայեացքը կարծես հետեւում էր անուշ
«եարի» յամր ու դողող քայլերին:
Հանգչող խարոյկի վերջին կայծերը երկնքի
ցոլցոլուն աստղերի պէս պէ՛ս պէ՛ին էին տա-
լիս: Քամին դադարել էր, ցուրտը խաղաղել
լուսինն էլ պճնված նորահարսի պէս...

ցայ թիֆլիսից պ. բժշկական 3. Գաղափարա-
նից 100 բուրձի, Բագրից պ. Մ. Ասլանբե-
նից 60 բուրձի, որից 30 բ. նուրբի է ինքը
ի յիշատակ իր հանգուցեալ մօր Ռէհանի, իսկ
30-ը ժողովել է հետեւեալ նուիրատուներէր-
ց. Ս. Ամիրեան 5 բ., Ս. Ռ. 1 բ., Ս. Մեհրե-
զադեան 10 բ., Վ. Ժամկոչեան 2 բ., Մ. Ա.
Պարոն 1 բ., Արամբեկեան 3 բ., Պ. Առաքե-
լեան 3 բ., Ս. Վ. 5 բ.: Յայտնում էմ խորին
շնորհակալութիւն նուիրատուներին իմ և
Գրգեւանի հասարակութեան կողմից:
Պարտք եմ համարում աւելացնել, որ եկե-
ղեցու պատերը պատրաստ են, մնում է ծած-
կը, որի համար ժողովուրդը դիմել է մի քա-
նի հարուստների և յուսով է թէ նրանք էլ
չեն մերժի աղքատ ժողովուրդի խնդիրը:

Մերսոպ քահանայ էջիկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Մենք հաղորդել էինք, որ կառավարութիւնը
մատչելի է բարձրել Սեւ-Մովի նաւահանգիստ-
ները Բաթումի նաւահանգիստը ընդարձակե-
լու և բարենորոգելու համար նշանակված է
12 միլիոն ռուբլի գումար, որ պէտք է ծախ-
սվի չորս տարվայ ընթացքում: Ֆինանսների
մինիստրութեան ընդունած ծրագրով՝ Բաթում-
ի նաւահանգիստը պէտք է բարեփոխվի Անտ-
վէրպէն քաղաքի նշանաւոր նաւահանգիստի
ձեւով:

Փետրվարի 29-ի գիշերը, Դիդուբեդում Իւան
Պանկինի և Կոզնեցովի տներում հրդեհ ծա-
ղեց: Հրդեհն այնպիսի արագութեամբ տա-
րածվեց երկու տան բոլոր մասերումն և, որ
նրանց բազմաթիւ բնակիչները, որոնք այդ
ժամանակ խոր քնի մէջ էին, հազիւ կարողա-
ցան ազատել իրանց անձը: Այնու ամենայնիւ
երկու հոգի, Մարգարիտ Պաղալիս և նրա 5-ա-
մեայ աղջիկը, զոհ գնացին կրակին, և նրանց
մարմինները հրդեհից յետոյ գտնուեցան անխա-
ցած դուռի մէջ: Բնակիչների տնային կա-
րասիքից և այլ իրերէններից շատ քիչ բան
աջողվեց ազատել: Վնասը բաւական մեծ գու-
նարի է հասնում:

Հիւսիսային Կովկասում գտնվող Գորեախի-
կուշ հանքային ջրերը նոր ուժ ստացան: Ե-
րևանից նոր աղբիւր, որ տալիս է օրական մօտ
3000 վիդրո տաք ջուր 32° ռ. տաքութեամբ:
Նոյն տեղում նկատվել է սնդիկի հանք, որ
ներկայումս շատ թանկ է գնահատվում, ո-
րովհետեւ սնդիկի արտադրութիւնը սահմանա-
փակ է:

Երկուշաբթի, փետրվարի 28-ին, թիֆլիսի
քաղաքային վարչութեան և քաղաքային խոր-
հրդի յանձնաժողովի միացեալ նիստերում, որին
մասնակցում էր ևս Կ. Բորի, քննվեց վեր-
ջինիս առաջարկած ծրագիրը՝ քաղաքից մինչև
Մթածմինդա սարի գլուխը լեռնային երկաթ-
ժուղի շինելու հարցը: Միացեալ նիստում մը-
շակված պայմանագրի ծրագրերը առաջիկայ մար-
տի 6-ին պէտք է ներկայացվի քաղաքային
խորհրդի քարոհանդիմութեանը: Պայմանագրի
գլխաւոր կէտերը սրանք են. 1) խմբակը Ա. Կ.
Բորիին իրաւունք է տրվում շինել և շահա-
գործել թիֆլիս քաղաքում երկաթժուղային
ֆունիկուլեոր, սկսած Ս. Դաւթի լեռան ստո-
րոտից, քաղաքային ջրամբարի մօտից, մինչև
լեռան գլուխը, որ այժմ գտնվում է «Մենա-
կեաց» հանձնարման գանդուլը: 2) Երկաթժուղու
երկաթժուղիւնը պէտք է լինի 429, 53 մետր,
իսկ թեքութեան աստիճանը 49-ից մինչև 57:
Ճանապարհի լայնութիւնը պէտք է լինի մի
մէտր և մէջ տեղում, մի օրեւէ կետում, ճա-
նապարհը պէտք է ունենայ աւելի լայնութիւն,
որպէս զի դէմ առ դէմ եկող գնացքները կա-
րողանան անցնել: 3) Երկաթժուղու տեխնիկա-
կան ծրագրերը ընդունված կարգով հաստատե-
լուց մի տարի յետոյ արտօնատէրը պարտաւոր-
վում է, վերջացնելով մինչ այդ ժամանակ չի-
նութեան բոլոր աշխատանքները, գնացքների
կանոնաւոր երթևեկութիւն սկսել: 7) Արտօ-
նութիւնը տրվում է 45 տարով՝ սկսած երկաթ-
ժուղու բացման առաջին օրից: 8) Արտօնա-
տէրը պարտաւորվում է երկաթժուղու ընդհա-
նուր արդիւնքից վճարել յօդուտ թիֆլիս քա-
ղաքի. 1%, եթէ արդիւնքը լինի 10,000 ռուբլի,
4%, եթէ լինի 10—20 հազար, 6%, եթէ 20—
30 հազար, 8%, եթէ լինի 30—40 հազար, 10%,
եթէ լինի 40—60 հազար, և 12%, եթէ 60
հազար ռուբլուց աւելի լինի: 11) Երկաթժուղու
գնացքները մարտի 1-ից մինչև մայիսի 1-ը
պէտք է դուրս գան ժամը մի անգամ, առա-
ւօտեան 8-ից մինչև երեկոյան 1-ը, իսկ մայ-
իսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը—իւրաքանչ-
իւր կէս ժամը մի անգամ՝ առաւօտեան 7-ից

մինչև երեկոյան 11 ժամը: Հոկտեմբերի 1-ից
մինչև նոյեմբերի մէկն այնպէս, որպէս մարտի
1-ից մինչև մայիսի 1-ը: Արտօնատէրը քաղա-
քի հետ համաձայնութիւն կայացնելով, գնացք-
ներ կարող է նշանակել և փոխել ամիսների
ընթացքում: Ամենաբարձր վճարը լինելու է—
վերին կայարանից մինչև ստորինը—15 կ., ստո-
րինից մինչև վերինը—20 կ.: գնալ և վերա-
դառնալ ցանկացողները կը վճարեն 30 կ.:
Մինչև Ս. Դաւթի վանքը գնալ և վերադառ-
նալու համար 10 կ., թէ վերին կայարանից և
թէ ստորինից: Պ. Բորին մտադիր է ապագայ-
ում երկաթժուղու գիծը Մթածմինդայի գլխից
շարունակել մինչև Կօթօր:

ԹԻՆՈՒՍԻԱՅԻՑ մեզ գրում են. «Նկարիչ
Ալվազովսկին մեծ պատի առաջին օրերին մեկ-
նելու է Թէոդորայից Պետերբուրգ, նկարչա-
կան ցուցահանդէսներին ներկայ լինելու»:

ԲԱՐՎԱՆԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Եղա-
նակները մեղանում գարնանային են. բարե-
կենդանները մեղանում շատ ուրախ անց կա-
ցան. մեր գիւղացիները, որ ամեն բանով օրի-
նակ են գաւառի գիւղերի համար, բարեկեն-
դանի օրերում իրանց աղքատների համար էլ
հոգացին: Գովելի է այս սովորութիւնը, որ երբ
իրանց աղքատի համար ժողովարարութիւն է
սկսվում՝ ամիսըսկսէ ամենքն էլ մասնակցում
են: Գարնանացանը սկսվել է:

ՎԵՐԻՆ-ԱՂԴԱՆ գիւղից մեզ գրում են.
«Անցեալները գաւառական բժիշկը գալով այս-
տեղ՝ հանեց գերեզմանից նոր թաղված Մար-
գանանցի կնոջը և անդամահատեց: Ասում
են, որ խղիւղամահ է եղած: Գննութիւն է
կատարում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—Հեռագրներից յայտնի է արդէն, որ Կապի
գաղթականութեան անգլիական տակ հօլան-
դացիները տեղ-տեղ բաւականաչափ բազմա-
թիւ ապստամբական խմբեր են կազմել և
աշխատում են օգնել իրանց աղգակից բօշ-
ներին: Բրիտանական զօրքի մի մասը ստիպ-
ված է այժմ լուրէլ այդ ապստամբների դէմ,
որոնք աւելի ևս վտանգաւոր են նրա համար,
որ գործում են անգլիական զօրքերի հաղոր-
դակցութեան ճանապարհների վրա: «Daily Te-
legraph» լրագրի Կապտաուդի թղթակիցը մատ-
նացուց է անում այն եռանդուն պրօպագան-
դան, որ վարում է այժմ հօլանդացիների
դաշնակցութիւնը յօդուտ հարաւային Աֆրի-
կական հանրապետութիւնների անկախութեան
«Անցեալ չարքով, ասում է թղթակիցը, հօլ-
անդական վերանորոգված եկեղեցին հրատա-
րակեց մի ընդհանրական թուղթ, որի մէջ
աշխատում է բացատրել Կապի գաղթականու-
թեան հօլանդացիների վերաբերմունքը դէպի
Անգլո-արաբական պատերազմը: Այդ թղթ-
թի մէջ, ի միջի այլոց, ասված է. «Մենք ի
լուր աշխարհի յայտարարում ենք, որ անգլ-
իացիներին Հարաւային Աֆրիկայից արտաք-
սելու դաւադրութեան աստեղծ ենք անգամ չենք
տեսնել: Բայց մենք չենք կարող երաշխաւոր
լինել, որ մեր ժողովուրդը, պատերազմի հէնց
սկզբից կրած ամօթից յետոյ, դեռ ևս ոչ
կունենայ դիմադրելու այն գաղթականութիւն-
ներին, որոնք երկարվում է նրա հաւատա-
րելի հպատակութեան գզգզմունքը: Մենք
սկսում ենք երկիւղ կրել, (և մեր երկիւղը
ընդհանրապէս առանց պատճառի չէ), որ եթէ
Անգլիայում յաղթող չեն հանդիսանայ աւելի
խոնհւմ և աւելի խաղաղասիրական հայեացք-
ներ՝ հօլանդացիները բանը կը վերջացնեն
նրանով, որ կապտաուդեան Անգլիայի դէմ, թէ-
պէս և մինչև այժմ նրանք նոյնպիսի հա-
ւատարմի հպատակներ են եղել նորին մեծու-
թեան թագուհուն, որպէս և ուրիշները կայս-
րութեան միւս երկրներում»:

—Ամսերկրամի «Պաղարկութեան դաշնակ-
ցութիւնը» դիմել է այն բոլոր պետութիւննե-
րին, որոնք ներկայացուցիչներ էին ուղարկել
Հաագայի կոնֆերենցիային, և ամենանիշ ա-
րել այն հանգամանքը, որ երկու պատերազմող
կողմերը ևս բաւականաչափ գործ են կատա-
րել այժմ իրանց զէնքի պատերը պաշտպանե-
լու համար, և թէ Հաագայի կոնֆերենցիայի
որոշումները պարտք են դնում մասնակցող
պետութիւնների վրա միջամտել պատերազմին
և վերջ գնել նրան: Ներկայացրած յիշատակա-
գրի տակ կան 3000 ստորագրութիւններ, ո-
րոնք պատկանում են մեծ մասամբ յայտնի
և յարգելի անձնաւորութիւնների:

—«Liberté» լրագրում տպագրված է մի հե-
ռագիր Լօնդօնից, որի մէջ թղթակիցը ասում
է. «Ես ամենամիտ տեղեկութիւններ ունեցող
անձերից իմացայ, որ անգլիական կառավա-
րութիւնը խաղաղութեան բանակցութիւններ
կը սկսէ Հարաւ-Աֆրիկական հանրապետու-
թիւնների հետ՝ Բլումֆոնտէյն անկեղեց յետոյ»:

—«Pester Lloyd»-ը հաղորդում է, թէ Սեր-

բիական Նատալիա թագուհին, որ այժմ մշտա-
պէս ապրում է Բիարրիցում, կազմել է մի կը-
տակ, որով իր անպէս կարողութեան կէսը
թողնում է յօդուտ աղքատների Սերբիայում
և միւս կէսը յօդուտ նոյնպէս աղքատների
Ֆրանսիայում: Այնքանապէս թագուհուրի մասին
կառկում ոչ մի խօսք չէ ասված: Բեղրատի
պաշտօնական չըջաններում յոյս ունեն, որ
Նատալիա թագուհին կը փոխէ իր կտակը յօ-
գուտ իր որդու՝ Ալէքսանդր թագաւորի:

—«Արեւելք» լրագրի մէջ կարգում ենք.
«Վանայ մեր թղթակիցը յունուար 22 թուա-
կանով հետեւեալ քառամեկուսի լուրը կը հա-
ղորդէ մեզ. «Տեղա գտնուող օտարազան
վարդապետներէն մէկը երկու օր առաջ ձեր-
բակալուելով բանտարկուեցաւ, որովհետեւ հայ
կին մը բռնաբարած էր օր ցորեկով իրենց բա-
ցած մէկ մատուռին քովիկը, Պոտիկ Մինասնց
տան մէջ: Բարեխնամ կառավարութեան այս
արդարադատ որոշումը անհուն գոհունակու-
թեամբ լեցուց տեղւոյս բոլոր ժողովուրդեան
սիրտը: Յիշեալ վարդապետին նողկալի արարքը
այնպիսի դալթակցութիւն մը առաջ բերաւ,
որ անկարելի է նկարագրել»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

29 փետրվարի

Վիէննա: Պատգամաւորների ժողով: Նիստի
վերջում մինիստր նախագահը պատասխանում
է այն հարցաւորումին, որ վերաբերում է
անգլիական զօրքին իբր թէ ուղղմամբ երբ
տակարարելու հարցին: Արտաքին գործերի մի-
նիստը ի համաձայնութիւնը ստանալով՝ նա
ասում է, թէ չէ՞ղք դիրքով իսկպաշէն որոշ-
վում են միայն կառավարութիւնների փոխա-
դարձ յարաբերութիւնները և ոչ նրանց հաւա-
տակների, ուստի և չէ՞ղք պետութիւնը պար-
տաւոր է չօգնել և չը խրախուսել պատե-
րազմող կողմերից որեւէ մէկին, բայց չէ կա-
րող ճնշումն գործ գնել և արգելք դառնալ
իր հպատակների առեւտրական գործունեու-
թեանը: Հունգարիայում ձիւր գնելու մէջ կա-
ռավարութիւնը ամենեւին խառն չէ: Զիալա-
ճանները օգուտ քաղեցին դէպքից, այդպիսի
դէպքեր եղել են և ուրիշ պատերազմների
և պատմականը այս հաղորդագրութեան Պա-
տասխանում ասված է, թէ անգլիական կառա-
վարութիւնը կարող է միայն պատասխանել
թէ նա մտադիր չէ համաձայնելու Տրանսիլա-
ւի կամ Օրանսեան հանրապետութեան անկա-
խութեանը:

ՀԱՄԱԳԱ: Կառավարութիւնը վարձեց մի մեծ
շինութիւն, որտեղ պէտք է նիստեր ունենայ
միջազգային միջնորդ դատարանի մշտական
բիւրօն:

ԼՕՆԴՈՆ, Հէրլէյց հաղորդում են, թէ
Բիւրիմիստ նորից գրաւված է Կապի ոստիկա-
նութեան զինուորներով:

Լօրէնցո-Մարկեզից հեռագրում են «Ti-
mes»-ին, փետրվարի 28-ից, վաղը ուղեւոր-
վում է Եւրօպա, հաշտութեան մասին բանակ-
ցելու համար, բօշներին պատգամաւորութիւն,
որի անդամներն են Ֆիշեր և Վօլմօրտուզ
Վէստէյ:

ԿԱՊԵՏԱՊՈՆ: Միջին մուտք գործեց Բլում-
ֆոնտէյն:

ՍՏՐՈՒԲԵՐԳ: Բրաբանտի զօրքերը կիրակի
առաւօտ մօտան Ալվիլպօրտ, նախընթացաբար
չաբաթ օրը սաստիկ կռիւ մղելով բօշներին
դէմ, որոնք դիչերը անց կացան գետի միւս
կողմը:

ՊՐԵՏՈՐԻԱ: Այս առաւօտ այստեղ հասաւ
Ժուլէր, կառավարութեան հետ խորհրդակե-
լու համար: Ոչ մի պաշտօնական յայտարարու-
թիւն չէ եղել հաշտութեան մասին բանակցու-
թիւնների համար:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Կրիւզեր և Շաէյն նախա-
գահների խնդրեցով Ամերիկան Անգլիային ա-
ռաջարկեց իր ծառայութիւնը միջնորդ լինելու
հաշտութեան կնքելու համար, բայց այս առա-
ջարկութիւնը մերժվեց նոյնքան քաղաքավար
և սրտադին ձեւերով, ինչպէս և առաջար-
կութիւնն էր եղած: Ասում են, թէ Անգլիային
եղած առաջարկութիւնը այնպէս էր խմբագրե-
ված, որ ոչ մի կերպով չէր կարելի Ամերի-
կային վերադրել ցանկութիւն միջամտելու ի-
րան չը վերաբերված գործի մէջ:

ՀԱՄԱԳԱ: Մինիստրների խորհրդում քննվում
էր Կրիւզեր նախագահի խնդրել միջնորդու-
թեան մասին: Քիչ հաւանականութիւն կայ, որ
կառավարութիւնը, առանց տեղեկանալու շահա-
գրգոված տէրութիւնների կարծիքների հետ
որեւէ վճիռ կայացնէ:

ԼՕՆԴՈՆ: «Վօլֆի գործ» Հրատարակված է
հետեւեալ տեղեկութիւնը. Տրանսիլաւի կառա-
վարութեան խնդրին միջամտութեան կամ միջ-

մինչև մուկն ընկնելը գրաւէ Բլումֆոնտէյնի
երկաթուղային կայարանի շողեկառքերը և չո-
գեմքեմանները: Կէս գիշերին Յիշեալ հաղորդեց
Բօբերտսին, թէ ընդդիմութեան չը հանդիպե-
լով, երկու բլուր գրաւեց երկաթուղու կայա-
րանի մօտ և գերի վերցրեց Շաէյն նախագա-
հի եղբորը: Հեռագրական հաղորդակցութիւնը
հիւսիսի հետ կորված է և երկաթուղու գիծը
աւելված: Բօբերտս այս բօլէին ճանապարհ է
ընկնում հեծեալների 3-րորդ դիվիզիայի հետ,
որ նա բաժանել է 7-րորդ դիվիզիայից:

ՎԵՐԵՑՈՒՆԻՆԻ: Գնեւրալ Կլէմէնց լուսա-
բացին թնդանօթային հետախուզութիւն կա-
տարեց, թշնամու դիրքի ամրութեան աստի-
ճանը որոշելու նպատակով: Օրանսեան գետի
հիւսիսային ափի վրա, և գրաւեց գետի հա-
րաւային ափին գտնվող բլուրները քառասուն
ֆունտանոց թնդանօթներով, չորս բառարէա-
ներով և Մաքսիմի երեք թնդանօթներով:
Թնդանօթային կրակը տեւեց մի քանի ժամ:
Քառասուն ֆունտանոց թնդանօթները արձա-
կում էին լիւղիտի ուղեւոր: Հաղկապակց ա-
փի բլուրները ենթարկվեցին զօրեղ կրակի:
Բօշներին գրաւած ագարակի մէջ հրդեհ ըն-
կաւ ուղեւորի պալատից: Բօշները պատա-
խառնում էին ընդհանուր հրացանաձուլութեամբ:
Անկերեւ է, որ թշնամու ոյժերը սակաւ են:
Բրիտանական զօրքերը ոչ մի կորուստ չու-
նեցան:

ՀԱՄԱՊՏԱՌԻ: Բրիտանական հեծեալազօրքը,
Կարեգօֆից վեց մղոն հեռու, Շեֆիքստի
մօտ, կռիւ սկսեց թշնամու հետ: Բօշները
կորցրին 6 սպանված և վիրաւորված է:

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Փետրվարի 29-ին, թագա-
ւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհիները, Թա-
գածուհուհի, Մեծ Իշխանները և Իշխանուհի-
ները այցելեցին պատկերների շարժական ցու-
ցահանդէսը:

1 մարտի

ԿԱՊԵՏԱՊՈՆ: Սէսիլ Ռօզս ուղեւորվում է
Անգլիա:

ԼՕՆԴՈՆ: Լօրէրի պալատ: Մարկիզ Մալիս-
բիւրի կարգաց Կրիւզերի հաղորդագրութիւնը
և պատասխանը այս հաղորդագրութեան Պա-
տասխանում ասված է, թէ անգլիական կառա-
վարութիւնը կարող է միայն պատասխանել
թէ նա մտադիր չէ համաձայնելու Տրանսիլա-
ւի կամ Օրանսեան հանրապետութեան անկա-
խութեանը:

ՀԱՄԱԳԱ: Կառավարութիւնը վարձեց մի մեծ
շինութիւն, որտեղ պէտք է նիստեր ունենայ
միջազգային միջնորդ դատարանի մշտական
բիւրօն:

ԼՕՆԴՈՆ, Հէրլէյց հաղորդում են, թէ
Բիւրիմիստ նորից գրաւված է Կապի ոստիկա-
նութեան զինուորներով:

Լօրէնցո-Մարկեզից հեռագրում են «Ti-
mes»-ին, փետրվարի 28-ից, վաղը ուղեւոր-
վում է Եւրօպա, հաշտութեան մասին բանակ-
ցելու համար, բօշներին պատգամաւորութիւն,
որի անդամներն են Ֆիշեր և Վօլմօրտուզ
Վէստէյ:

ԿԱՊԵՏԱՊՈՆ: Միջին մուտք գործեց Բլում-
ֆոնտէյն:

ՍՏՐՈՒԲԵՐԳ: Բրաբանտի զօրքերը կիրակի
առաւօտ մօտան Ալվիլպօրտ, նախընթացաբար
չաբաթ օրը սաստիկ կռիւ մղելով բօշներին
դէմ, որոնք դիչերը անց կացան գետի միւս
կողմը:

ՊՐԵՏՈՐԻԱ: Այս առաւօտ այստեղ հասաւ
Ժուլէր, կառավարութեան հետ խորհրդակե-
լու համար: Ոչ մի պաշտօնական յայտարարու-
թիւն չէ եղել հաշտութեան մասին բանակցու-
թիւնների համար:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Կրիւզեր և Շաէյն նախա-
գահների խնդրեցով Ամերիկան Անգլիային ա-
ռաջարկեց իր ծառայութիւնը միջնորդ լինելու
հաշտութեան կնքելու համար, բայց այս առա-
ջարկութիւնը մերժվեց նոյնքան քաղաքավար
և սրտադին ձեւերով, ինչպէս և առաջար-
կութիւնն էր եղած: Ասում են, թէ Անգլիային
եղած առաջարկութիւնը այնպէս էր խմբագրե-
ված, որ ոչ մի կերպով չէր կարելի Ամերի-
կային վերադրել ցանկութիւն միջամտելու ի-
րան չը վերաբերված գործի մէջ:

ՀԱՄԱԳԱ: Մինիստրների խորհրդում քննվում
էր Կրիւզեր նախագահի խնդրել միջնորդու-
թեան մասին: Քիչ հաւանականութիւն կայ, որ
կառավարութիւնը, առանց տեղեկանալու շահա-
գրգոված տէրութիւնների կարծիքների հետ
որեւէ վճիռ կայացնէ:

ԼՕՆԴՈՆ: «Վօլֆի գործ» Հրատարակված է
հետեւեալ տեղեկութիւնը. Տրանսիլաւի կառա-
վարութեան խնդ

Նորգոյթեան մասին՝ գերմանական կառավարութիւնը պատասխանեց, թէ ստիպւած է մերժել այս խնդրը, որովհետեւ ինքն այն կարծիքին է, թէ պատերազմը իրան ամենեւին չէ վերաբերում: «Վօլֆի գործակալութիւնը» նկատում է. «Մեր ժողոված տեղեկութիւնները նայելով՝ վերոյիշեալ հաղորդագրութիւնը ճիշտ չէ, եւ գործի հանգամանքն այսպէս է. երկու հանրապետութիւններ կառավարութիւնները Պրետորիայում գտնվող հիւպատոսների միջոցով դիմելին շատ մեծ ու փոքր տեղութիւններ, ինչպէս ըստ կամեանքի միջնորդութիւն: Գերմանական կառավարութիւնը պատասխանեց, թէ ինքը պատրաստ է միջնորդութեան գործին աջակցել՝ հէնց որ սրա համար կարեւոր հիմնակէտը գտնվի, այսինքն երբ հաստատվի, թէ երկու հակառակորդներն էլ կամենում են միջնորդութիւն: 10հոկտեմբերին «Times»-ին հետազոտում են Մէֆ-կինգին, թէ զորքը շատ նեղվում է պաշարումից, կերակրվում է ձիու մսով եւ ձիու ապուրից թխված հացով: Տիֆ, արեւմտային փոքրածութիւն, բացառ սաստիկ տարածված են. աւելի խիստ քիչ տարածված են կանայք եւ երեխաները: Բնիկները մեծամասնութիւն են քաղցից: ԴՈՒՐԲԱՆ. Ուորթէն այստեղ է գտնվում իր գլխավորի մի մասով, բայց յայտնի չէ, թէ ուր է ուղևորվում գնալ գործով:

ՊԵՏԵՐԲՈՐԳ. Ներքին երկրորդ վիճակախաղով փոխառութեան այսօրվայ 68-րդ տիրածում գլխավոր գումարները տարան հետեւեալ տոմսակները. 200,000 ռ.—18346/49. 75,000 ռ.—5397/41. 40,000 ռ.—13580/39. 25,000 ռ.—7273/24. 10000-ական ռ.—17944/22, 8763/4, 12150/38. 8000-ական ռ.—6228/17, 16059/21, 12145/6, 15970/2, 19738/21. 5000-ական ռ.—2113/9, 19967/25, 8789/20, 14337/31, 10694/46, 19097/1, 16724/20, 15867/44. 1000-ական ռ.—18750/34, 13295/16, 10826/11, 8427/38, 142/22, 2308/50, 14346/42, 15536/32, 9622/22, 262/5, 5288/43, 10063/21, 2910/26, 11612/28, 2063/31, 10868/43, 2248/27, 14128/32, 195/45, 15655/26:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆՆԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԿ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնյովի արձանի հանդէպ)

ա մ ե ճ ո Ր, բ ա ճ ի կ ի ռ ա կ ի ո Ր ե ի ճ:

Ա Ռ Ա Ռ Ց Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. վերաբերութեան, վերաբերան (սիֆիլիս) և միջատեւ հիւանդ. Կ. Մ. Զիլովանի—9—10 ժ. աչքի, ներքին և ներքային հ. Զ. Բ. Բարախանեան—11—12 ժ. կանանց և երեխայից հիւանդ. Բ. Յ. Պրոսակովիչ—12—1 ժ. ականջի, կոկորդի, բերան և կրծքի հ. Ս. Պ. Կարապետեան—1—1½ ժ. ներքին և երեխայից հ. Ս. Գ. Գուրկո—1½—2 ժ. ներքին հ. Ե Ր Ե Վ Ո Ն Ե Ր Ը

Բ. Յ. Պրոսակովիչ—5—6 ժ.

Ս. Ն. Շալաիովիչ—6—7 ժ. ներքային (էրեքտիլութիւն), վերաբերան և մորթի հ. Բ. Ա. Նախասարգեան—7—7½ ժ.

Վ. Մ. Մալովիչ—քիմիական և խոշորացուցական հետազոտութիւն մէջի, խիստ և արեւմտ. Վճար 50 կ. չքաղարները ձրի, չափաւորչիկ (կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին. Օ. Տ. Առվանիսկի—առանց. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերահսկող՝ 96—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ԱՐՏԻՍՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնադրի, մարտի 2-ին, տեղի կունենայ

նշանաւոր

2ԵՒԱԿԱՆ ԿՎԱՐՏԵՏԻ

40ՆՑԵՐՏԸ

Առաջին շուկա—Կ. Հօփման. երկրորդ շուկա—Բ. Մուկ, Արտ—Օ. Նեղար. փոխնչէլ—Գ. Վիգան: Տոմսակները կարելի է ստանալ Բ. Մ. Միլիանեանի երաժշտական պահեստում, ԴՎՈՐԵՎԻ փողոցի վրայ: 2—2

Հ Ր Ա Ի Է Ր

Մեծ պատի երկրորդ կիրակի օրը, Մարտի 5-ին, ս. պատարագից յետոյ, 12 ժամին, Թիֆլիսի Մոզնու. ս. Գէորգ եկեղեցու բարեպաշտ ծխականները հրաւիրում են յիշեալ եկեղեցին Հորս պատգամաւոր ընտրելու Թիֆլիսի Մարիամեան-Յովնանեան օրորակական ուսումնարանի համար հողաբարձունքի ընտրելու համար: Գործակալ ա. մ. եկ. հ. Թիֆլիսի Զաքարիա քահանայ Զարդեղեանց 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտութիւն ամենքի, որ ներկայ 1900 թվի փետրվարի 9-ի կարգադրութեամբ, քաղաքային բուժարանում հիւանդների ընդունելութիւնը կանոնաւորելու համար, սահմանված են հետեւեալ կանոնները:

1) Քաղաքային բուժարանը եւ նրա բաժանմունքները Կուկիայում, Պարփուխում եւ Հաւարարում ձրիաբար բժշկվելու. եւ ձրիաբար զեղեր ստանալու համար ընդունվում են բացառապէս միայն չքաղարները, որոնք իրանց աւանդները գրել տալու համար պարտաւոր են ներկայացնել չքաղարութեան վկայագիրը:

2) Այդ վկայագիրները կարող են ստացվել օտարկանութիւնից (սիֆիլիսից), զորք դաւանութիւններին պատկանող հոգեւորականներից, բոլոր թէ քաղաքային ու արեւմտական ծառայութեան մէջ գտնվող եւ թէ անպաշտօն բժիշկներից, թաղական հողաբարձունքից, բարեգործական ընկերութիւններից, զասակարգային, այսինքն վաճառականական եւ արհեստաւորների աւանդներից (ստորաշինաներից), արքունական եւ հասարակական հիմնարկութիւնների գլխավորներից, եւ նոյնպէս ուսումնարանների կառավարիչներից:

3) Վերոյիշեալ վկայագիրը չի պահանջվի միմիայն այն հիւանդներից, որոնք կարօտ են անյետաձգելի օգնութեան:

4) Քաղաքային բուժարանը եւ նրա բաժանմունքները զիմող հիւանդների անունները ցուցակագրվում են մինչեւ ժամը 12-ը: 1—3

Ծախվում է մի տուն

ԲՈՂՅԱՅ ԿԵՐԿԱՅ Եւ ՄՈԶՆԱՅ փողոցի (այժմ Շելիօվիցիօվսկայա եւ Բորիսօվսկի փողոցների) անկիւնում, № 21: Կարելի է գրաւ դնել: Հարցնել ՎՈՐՈՇՆԻՅԱՅ փողոց № 20, տան տիրոջը: 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, թէ նրա գիւմարտան մէջ 1900 թվի մարտի 10-ին, ժամը 12-ին, նշանակված է աճուրդ կապալով տալու քաղաքային մի հողաբաժին, որ գտնվում է 10-րդ քաղաքամասում եւ որի չափը 450 քառ. սառ. ժէն է: Հողաբաժին սահմաններն են—հիւսիսից՝ Մուշաթիկի փողոցը, արեւելքից՝ Անդրեւեանի փողոցը շարունակութեւնը, հարաւից—քաղաքային մի հողաբաժին, որ վարձել է ինչի-կեանցը, եւ արեւմուտից—նոյնպէս քաղաքային հողաբաժին, որտեղ գտնվում է փայտեղէնի պահեստ: Աճուրդի մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը առաւօտեան ժամը 9-ից մինչեւ 2-ը: 2—3

ԲԱՅՎԱՆ Ե ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՆԱՐԱՆԻ

1 մաս, 160 երես, 1 բաղկի

(ձանադարձակաւորով 1 րուրի 20 կոպէկ)

Դիմել՝ Женева, Швейцария, Т. Н. Иоанни-сянцу.

Genève, Suisse, Rue de Candolle 19, Pension Vivien, M. T. Ioannissian. (Կ. չ.) 8—12

Վ ա ճ ա ո Վ ու մ ե ն

ՈՒՂԵՑՈՑ ԳՈՐԾԱԿԱՆ ՇԵՐԱՄԱՎԱՅՈՒԹԵԱՆ, Կ. Մէլիք-Շահնաւարեանի

ԶՐՈՑՆԵՐ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ, Ս. Բալախանի

ԱՆԵՐԵՆՈՑ ՀՈՂԳՈՐԾԸ, Դարվիլի, փոխ. Լ. Մ.—Ար.

ԶՐՈՑՆԵՐ ԲՈՒՌՈՒՄԵՆ ՄԵԾ Ե անէկ երեւոյթների մասին, թ. Մ. Տէր-Աղբալ.

ԽժՈՂՆԵՐ, պրոֆէսոր Բոլորանովի, թ. Լ. Մ.—Աղաւ.

ԵՐԿՐԱՆԵՐ Ե ԶՐԱԲԱՅՈՒ լեռներ, Լեռնիկովիչի, թարգ. Լ. Մ.—Ա.

ԵՐԿՐԻ Ե ԵՐԿՐԻ մասին, Լեռնիկովիչի, թ. Լ. Մ.—Ա.

ԳԻՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՄԵՐԱՆԵՐ Ե ԳՈՐԾԻՆԵՐ, Լ. Խան-Աղեանի

Դիմել—Тифлис, контора Общества Издания Армянских книг (Лорисмеликовская № 11) կամ Tiflis (Russie) Société de la publication des livres arméniens. Ընկերութեան անդամ լինելու համար վճարում են տարեկան 6 րուրի եւ ստանում 8 րուրի գրքեր: Ընկերութեան գրասենեակում վաճառվում են ընկերութեան գրքերը: Զանկացողներին ձրի ուղարկվում է գրացուցակ: 3—3

ՄԱՆԱԲԱՐՉՈՒՄ Ե ՄԱՍԱԺՈՍԿԱՆ

ՕՐԻՈՐԴ ՆՈՒՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՕԼՕՇԵԱՆ

Հասցէն՝ Красногорская ул. № 14. 8—20

Վիեննայի Միլիթարեանների տպարանում

Մ ա մ ու լ ի տ ա կ է

2ԵՑՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԵՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԵՆ

1 մաս (մինչեւ 1890 թ.)

Կիւլիկայի քարտեզով, Զէյթունի յատակագծով, Զէյթունի տեսարանով եւ գէյթունցի կարիճի պատկերով:

Բաժանդրագինը ձանապարհածախսով 1 րուր. 20 կոպ. կամ 3 ռուբլ:

Բուրիները ուղարկել թղթագրամով, մանր փողը նամակակնիչներով (марка):

Դիմել պ. Տիգրան Յովհաննիսեանին հետեւեալ հասցէով. Женева, Швейцария, Т. Н. Иоаннисянцу.

Jenève, Suisse, Rue de Candolle 19, Pension Vivien M. Tigran Ioannissian.

(Կ. չ.) 8—12

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՅԲԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ Ե ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւաւաւացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ:

Եւ հակառակ՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս: Մեկնում Բաթումից՝ չորեքշաբթի, 1/14 մարտի ՍԻՐԿԱՍԻ չորեքշաբթի, նաւաւաւաց ԳԱՐԲԻԿ: Եւ այսպէս շարունակաբար, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորական պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտիքրպէնի մէջ, ընդունելով սպարանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ուսանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:

ԲԱՌՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր Դ'Արնօն, Նարբէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բաթլիկեանեանին, Սիւնի փող. իջնարանում: Մայսուրաձէի քարվանսարաւ ԲԱՌՈՒՄ—պ. Վ. Ե. Մուրաֆեաններին, Նարբէժնայա փողոց, տուն Կրասնիկովի, № 27: ՆՕՎՈՐՈՒՄ ՍԻՅՈՒ—Վարդիկակովի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Կ. չ.) 11—20

Բժշկարար Կէֆիր եւ Կոււմիս

Օ. ԿՕՐՕՆԱ

Թոյլատրված Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և արժանացած երկու մէդալների՝ երկու ցուցահանդէսներում, ընտիր կէֆիր և կումիս պատրաստելու համար: Կարելի է ստանալ Օ. Կորոնայի գործարանում, Լորիս-Մէլիքեան փողոց, տուն Զուբալովի և բաժանմունքում, Միքայիլեան փողոց, օֆիցներին տնտեսական ընկերութեան խանութին կից:

Աստղիչներին, ուսանողներին և տնտեսական ընկ. անդամներին կը լինի զիջում: Զիջում կունենան և այն չքաղարները, որոնք կը ներկայայնեն բժշկից առանձին դեղատոմս: Զանկացողներին՝ կէֆիր ու կումիս կարելի է տուն ուղարկել: 41—50

Ա. ԲԱՐԱՐԱՍ

1900

Ս. ԷՋՄԻԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒԹ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Լոյս կը տեսնէ 1900 թվին նոյն ուղղութեամբ

և նոյն ծրագրով

Բաժանորդագիրն է՝ Ռուսաստանում 4 ռ. Արաստանում 5 ռ.

Խնդրում ենք բաժանորդներին յայտնել

իրանց ձիւք հասցէները.

Հասցէն՝ Св. Эчмиадзин. Типографическому Комитету, Управлению делами, Редакция Журнала "Ararat". Etchmiadzine (Caucase). 3—3

Վաճառվում է

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՕՆՕԳՐԱՄՆԵՐ ԵՒ ԾԱՂԿԱ-

ԳՐԵՐ ԶԵՆԱԳՐՈՐԾԻ ՀԱՄԱՐ

Հրատ. Բ. ԱՆԵՐԵՆՈՒՄ

ԳԻՐԸ 50 ԿՕՊ.

Դիմել՝ Петербургъ Технологическій институтъ. Г. Худабашяну. 3—5

Վաճառվում է

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՕՆՕԳՐԱՄՆԵՐ ԵՒ ԾԱՂԿԱ-

ԳՐԵՐ ԶԵՆԱԳՐՈՐԾԻ ՀԱՄԱՐ

Հրատ. Բ. ԱՆԵՐԵՆՈՒՄ

ԳԻՐԸ 50 ԿՕՊ.

Դիմել՝ Петербургъ Технологическій институтъ. Г. Худабашяну. 3—5

Վաճառվում է

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՕՆՕԳՐԱՄՆԵՐ ԵՒ ԾԱՂԿԱ-

ԳՐԵՐ ԶԵՆԱԳՐՈՐԾԻ ՀԱՄԱՐ

Հրատ. Բ. ԱՆԵՐԵՆՈՒՄ

ԳԻՐԸ 50 ԿՕՊ.

Դիմել՝ Петербургъ Технологическій институтъ. Г. Худабашяну. 3—5

Վաճառվում է

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՕՆՕԳՐԱՄՆԵՐ ԵՒ ԾԱՂԿԱ-

ԳՐԵՐ ԶԵՆԱԳՐՈՐԾԻ ՀԱՄԱՐ

Հրատ. Բ. ԱՆԵՐԵՆՈՒՄ

ԳԻՐԸ 50 ԿՕՊ.

Դիմել՝ Петербургъ Технологическій институтъ. Г. Худабашяну. 3—5

Վաճառվում է

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՕՆՕԳՐԱՄՆԵՐ ԵՒ ԾԱՂԿԱ-

ԳՐԵՐ ԶԵՆԱԳՐՈՐԾԻ ՀԱՄԱՐ

Հրատ. Բ. ԱՆԵՐԵՆՈՒՄ

ԳԻՐԸ 50 ԿՕՊ.

Դիմել՝ Петербургъ Технологическій институтъ. Г. Худабашяну. 3—5

Վաճառվում է

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՕՆՕԳՐԱՄՆԵՐ ԵՒ ԾԱՂԿԱ-

ԳՐԵՐ ԶԵՆԱԳՐՈՐԾԻ ՀԱՄԱՐ

Հրատ. Բ. ԱՆԵՐԵՆՈՒՄ

ԳԻՐԸ 50 ԿՕՊ.

Դիմել՝ Петербургъ Технологическій институтъ. Г. Худабашяну. 3—5

Վաճառվում է

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՕՆՕԳՐԱՄՆԵՐ ԵՒ ԾԱՂԿԱ-

ԳՐԵՐ ԶԵՆԱԳՐՈՐԾԻ ՀԱՄԱՐ

Հրատ. Բ. ԱՆԵՐԵՆՈՒՄ

ԳԻՐԸ 50 ԿՕՊ.

Դիմել՝ Петербургъ Технологическій институтъ. Г. Худабашяну. 3—5